**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*22 փետրվարի 2024թվականի N 224*

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի N 596 ՈՐՈՇՄԱՄԲ ՏՐՎԱԾ N 58 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշումով, հիմք ընդունելով «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից փոփոխված աշխատանքային նախագիծը և Յուրիկ Հակոբյանի 2024 թվականի փետրվարի 16-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Ե Մ՝*

1.Հրազդան համայնքի ղեկավարի 2022 թվականի հունիսի 30-ի «Նախագծային փաստաթղթերը համաձայնեցնելու և շինարարության թույլտվություն տալու մասին» N 596 որոշմամբ տրված N 58 շինարարության թույլտվության 4-րդ կետում «(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)» տողում լրացնել « «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ» բառերը, իսկ «(նշել իրավասու մարմնի անվանումը)» տողում՝ «ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ» բառերը:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

22 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*22 փետրվարի 2024թվականի N 225*

## ԱՐԱ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՄԵՍՐՈՊՅԱՆԻՆ ԵՎ ՆԱԶԵԼԻ ԱՂՎԱՆԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 22-րդ կետերով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ և 8-րդ բաժինների պահանջներով, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 6-ի N 17 որոշումը և Արա Մեսրոպյանի և Նազելի Թովմասյանի 2023 թվականի ապրիլի 26-ի դիմումը.

## *<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝</u>*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 122 շենքի թիվ 2 բնակարանի բնակիչներ Արա Սերյոժայի Մեսրոպյանին և Նազելի Աղվանի Թովմասյանին ուղղակի վաճառքով ընդլայնման նպատակով օտարել իրենց սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 09062022-07-0104 գաղտնաբառ՝ 7DBMJAERDJFB) Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Մ.Բաղրամյան թաղամասի 5-րդ փողոց 2-րդ նրբանցք 1/3 հասցեում գտնվող 600.0քմ մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասին կից Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 30102023-07-0098, գաղտնաբառ՝ YBMN7WNL6HET) Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 5-րդ փողոց 2-րդ նրբանցք 1/3 հասցեում գտնվող 319.1քմ մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ՝ բնակել տուն կառուցելու նպատակով:

2.Հողամասն ուղղակի վաճառքով ընդլայնման նպատակով օտարել 1 417 500 (մեկ

միլիոն չորս հարյուր տասնյոթ հազար հինգ հարյուր) դրամ կադաստրային արժեքով՝ վճարել Հրազդան համայնքի բյուջեի 900125001140 գանձապետական հաշվին:
3.Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Մ.Բաղրամյան թաղամասի 5-րդ փողոց 2-րդ նրբանցք 1/3 (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 09062022-07-0104 գաղտնաբառ՝ 7DBMJAERDJFB) և Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 5-րդ փողոց 2-րդ նրբանցք 1/3 (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 30102023-07-0098, գաղտնաբառ՝ YBMN7WNL6HET) հասցեներում գտնվող միավորված հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամասի 5-րդ փողոց 2-րդ նրբանցք 1/3:
4.Արա Սերյոժայի Մեսրոպյանի և Նազելի Աղվանի Թովմասյանի հետ 319.1քմ մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր: Պայմանագրի կետերի կատարման հսկողությունը վերապահել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:
5.10-օրյա ժամկետում հողամասի կադաստրային արժեքը չվճարելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

22 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան



4284
4285
4509
0511
0022
0118
0120
0124
0114
0132
0134
0167
0054
0047
0016
0015001
0017
0200001
0201001
0197001
0053
0006
0005
0009
0010
0011
0012
0018
0019

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*23 փետրվարի 2024թվականի N 226*

### ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՁԵՂՆԱՀԱՐԿԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԼՈՂԱՎԱԶԱՆԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ ԴՌԱՆ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24- րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի պահանջներով, հիմք ընդունելով Սամվել Մկրտչի Համբարձումյանի 2024 թվականի հունվարի 26-ի դիմումը, , 1988 թվականի հուլիսի 28-ի անհատական բնակելի տան սեփականության վկայագիրը, համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից չափագրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2023WNUSXV ծածկագիրը.

## *<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝</u>*

1.Օրինական ճանաչել Սամվել Մկրտչի Համբարձումյանին պատկանող Հրազդան քաղաքի Երիտասարդական 1 թաղամաս 17 հասցեում գտնվող 600.0 քմ հողամասում ինքնակամ կառուցված 156.69 քմ արտաքին մակերեսով ձեղնահարկը, ինքնակամ կառուցված 11.72 քմ արտաքին մակերեսով լողավազանը, ինքնակամ բացված պատուհանները, ինքնակամ բացված դուռը ։
2.Հողամասի սահմանները որոշվում են «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
3.Ինքնակամ կառուցված ձեղնահարկը, ինքնակամ կառուցված լողավազանը, ինքնակամ բացված պատուհանները, ինքնակամ բացված դուռը կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, օրինականացման համար նախատեսված վճարները չեն գանձվում:
4. Ինքնակամ կառուցված ձեղնահարկի, ինքնակամ կառուցված լողավազանի, ինքնակամ բացված պատուհանների, ինքնակամ բացված դռան պահպանումը չի

խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
5.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:
6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

23 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ու Մ*

*23 փետրվարի 2024թվականի N 227*

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 07-ի N 189-Ն որոշման հավելվածը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

1.Տրամադրել թույլտվություններ՝ համաձայն հավելվածի.
1)օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի՝ 8 (ութ) հատ,
2)օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի՝ 8 (ութ) հատ, 3)թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի վաճառք՝ 1 (մեկ) հատ,
4)գովազդի տեղադրում՝ 3 (երեք) հատ,
5) տեխնիկական հեղուկների վաճառք՝ 1 (մեկ) հատ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

23 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2024 թ. փետրվար 23-ի
N 227 որոշման

# ՑՈՒՑԱԿ
# ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

| Հ/Հ | Իրավաբանական անձի անվանումը/անուն,ազգանուն/ կամ կազմակերպաիրավական տեսակը | Իրավաբանական հասցե | Գործունեության հասցե | Տեղական տուրքի տեսակը | Շինության տեսակը, մակերեսը՝ քառ/մ, գովազդի մակերեսը՝ քառ/մ | Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ա/Ձ «Գուրգեն Վարդանյան Արամի» | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս 5/6 | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս շենք 8,1-ին հարկ | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 2 | Ա/Ձ «Գուրգեն Վարդանյան Արամի» | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս 5/6 | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս շենք 8,1-ին հարկ | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 3 | Ա/Ձ «Գագիկ Սահակյան Հմայակի» | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս 37/15 | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս 37շենքին հարող տարածք | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 4 | Ա/Ձ «Գագիկ Սահակյան Հմայակի» | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս 37/15 | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս 37շենքին հարող տարածք | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 5 | Ա/Ձ «Արևիկ Կարապետյան Սուրիկի» | Ք. Հրազդան, Ջրառատ 448 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս շենք 55-ին հարող տարածք | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 6 | Ա/Ձ «Արևիկ Կարապետյան Սուրիկի» | Ք. Հրազդան, Ջրառատ 448 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս շենք 55-ին հարող տարածք | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 7 | Ա/Ձ «Գոռ Մարտիրոսյան Աղասու» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս , 25/6 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս շենք 57, 1-ին հարկ | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 8 | Ա/Ձ «Գոռ Մարտիրոսյան Աղասու» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս , 25/6 | Ք. Հրազդան, Միկրոշր[illegible] թ-ս շենք 57, 1-ին հարկ | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, [illegible]մնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 9 | Ա/Ձ «Արշակ Աղասարյան Աբրահամի» | Ք. Հրազդան, Բաղրամյան թ-ս 5-րդ փողոց, տուն 4/1 | Ք. Հրազդան, Բաղրամյան թ-ս 5-րդ փողոց, 1/1 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 10 | Ա/Ձ «Արշակ Աղասարյան Աբրահամի» | Ք. Հրազդան, Բաղրամյան թ-ս 5-րդ փողոց, տուն 4/1 | Ք. Հրազդան, Բաղրամյան թ-ս 5-րդ փողոց, 1/1 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 11 | Ա/Ձ «Ռաֆիկ Մարկոսյան Հովհաննեսի» | Ք. Հրազդան, Նար-Դոսի փողոց տուն 78 | Ք. Հրազդան, Շահումյան 68/5 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 12 | Ա/Ձ «Ռաֆիկ Մարկոսյան Հովհաննեսի» | Ք. Հրազդան, Նար-Դոսի փողոց տուն 78 | Ք. Հրազդան, Շահումյան 68/5 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 13 | Ա/Ձ «Քնքուշ Բարսեղյան Լևոնի» | Ք. Հրազդան, Չարենցի նրբ., տուն 26 | Ք. Հրազդան, Սպանդարյան փողոց շենք 1 թիվ 2 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 14 | Ա/Ձ «Քնքուշ Բարսեղյան Լևոնի» | Ք. Հրազդան, Չարենցի նրբ., տուն 26 | Ք. Հրազդան, Սպանդարյան փողոց շենք 1 թիվ 2 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 15 | «Քարավան Մարկետ» ՍՊԸ | Ք. Հրազդան, Զ. Անդրանիկի պողոտա 241/4 | Ք. Հրազդան, Զ. Անդրանիկի պողոտա 241/3 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 16 | «Քարավան Մարկետ» ՍՊԸ | Ք. Հրազդան, Զ. Անդրանիկի պողոտա 241/4 | Ք. Հրազդան, Զ. Անդրանիկի պողոտա 241/3 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 17 | «Դավս Գրուպ» ՍՊԸ | Ք. Հրազդան, Զ. Անդրանիկի պողոտա շենք8 | Երևան-Սևան 2/1 | տեխնիկական հեղուկների վաճառք | հիմնական շինություն | 2024 թվականի տարվա համար |
| 18 | Ա/Ձ «Արմիկ Երեմյան Միշայի» | Ք. Հրազդան, Մաքրավան թ-ս | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս, | թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի վաճառք | հիմնական շինություն | 2024 թվականի տարվա համար |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Օգոստոսի 23 | | | |
| 19 | «Կուրսուս» ՍՊԸ | Կոտայք Առինջ25/36 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, Է. Խեչոյան 20/2 | գովազդի տեղադրում | 5 քառ/մ | 2024 թվականի առաջին կիսամյակի համար |
| 20 | «Դավս Գրուպ» ՍՊԸ | Ք. Հրազդան, Զ. Անդրանիկի պողոտա շենք8 | Ք. Հրազդան, Զ. Անդրանիկի պողոտա շենք8 թիվ 12 | գովազդի տեղադրում | 5 քառ/մ | 2024 թվականի փետրվար ամսվա համար |
| 21 | Ա/Ձ «Ալեք Հովհաննիսյան Սայադի» | Ք. Հրազդան, Ռ. Միքայելյան փողոց, 2/32 | Ք. Հրազդան, Սպանդարյան 10 | գովազդի տեղադրում | 2 քառ/մ | 2024 թվականի փետրվար ամսվա համար |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*23 փետրվարի 2024թվականի N 228*

ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետով և հիմք ընդունելով Կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2061-Ա որոշումը, Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 19-ի N 33 որոշումը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝*

1.Որպես նվիրատվություն ընդունել Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2061-Ա որոշմամբ անհատույց սեփականության իրավունքով Հրազդան համայնքին փոխանցվող Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Ս. Սպանդարյան փողոց 72/5 հասցեում գտնվող 0.07446հա մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 19042023-07-0205):
2.Օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել նվիրաբերության պայմանագիր և պայմանագրից ծագող իրավունքները ներկայացնել պետական գրանցման:
3.Սահմանել, որ պայմանգրի կնքման և իրավունքների նկատմամբ պետական գրանցման աշխատանքները ենթակա են իրականացման Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի միջոցների հաշվին:
4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

23 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*26 փետրվարի 2024թվականի N 229*

### ՀԱՅԿ ԻՍԱՀԱԿԻ ՄԱՆՎԵԼՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ և 70-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 9-ի N 181 որոշման հավելվածը և 2024 թվականի փետրվարի 20-ի հողամասն աճուրդով վաճառելու մասին N16 արձանագրությունը.

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Վ.Մամիկոնյան փողոց 1-ին նրբանցք 11/1 հասցեում գտնվող 07-001-0675-0027 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման 0.01115հա մակերեսով հողամասը 1 100 000 (մեկ միլիոն մեկ հարյուր հազար) դրամ արժեքով օտարել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Երևանյան փողոց 29 շենքի թիվ 1 բնակարանի բնակիչ Հայկ Իսահակի Մանվելյանին՝ բնակելի տուն կառուցելու նպատակով:
2.Աճուրդով ձեռք բերված 0.01115հա մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:
3.Պարտավորեցնել Հայկ Իսահակի Մանվելյանին շինության շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

26 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*26 փետրվարի 2024թվականի N 230*

ՀՐԱՆՏ ՊԵՏԻԿԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ
ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ և 70-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 7-ի N 209 որոշման հավելվածը և 2024 թվականի փետրվարի 20-ի հողամասն աճուրդով վաճառելու մասին N7 արձանագրությունը.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 8-րդ փողոց 14/2 հասցեում գտնվող 07-001-0511-0060 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման 0.00339հա մակերեսով հողամասը 575 000 (հինգ հարյուր յոթանասունհինգ հազար) դրամ արժեքով օտարել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի թիվ 485 տան բնակիչ Հրանտ Պետիկի Մարգարյանին՝ տնտեսական շինություն կառուցելու նպատակով:
2.Աճուրդով ձեռք բերված 0.00339հա մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:
3.Պարտավորեցնել Հրանտ Պետիկի Մարգարյանին շինության շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ    Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

26 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*26 փետրվարի 2024թվականի N 231*

### ՍԱՄՎԵԼ ՄԱՆՎԵԼԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ և 70-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 9-ի N 181 որոշման հավելվածը և 2024 թվականի փետրվարի 20-ի հողամասն աճուրդով վաճառելու մասին N11 արձանագրությունը.

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Վանատուր թաղամաս 6/17 հասցեում գտնվող 07-001-0304-0113 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման 0.03հա մակերեսով հողամասը 1 725 000 (մեկ միլիոն յոթ հարյուր քսանհինգ հազար) դրամ արժեքով օտարել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի 6 շենքի թիվ 29 բնակարանի բնակիչ Սամվել Մանվելի Հովհաննիսյանին՝ բնակելի տուն կառուցելու նպատակով:

2.Աճուրդով ձեռք բերված 0.03հա մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

3.Պարտավորեցնել Սամվել Մանվելի Հովհաննիսյանին շինության շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

26 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*26 փետրվարի 2024թվականի N 232*

ԳԵՎՈՐԳ ԳԵՆԱԴԻԻ ԲԱԲԱՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ
ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ և 70-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 9-ի N 181 որոշման հավելվածը և 2024 թվականի փետրվարի 20-ի հողամասն աճուրդով վաճառելու մասին N10 արձանագրությունը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Հայ Ֆիդայիների փողոց 23/3 հասցեում գտնվող 07-001-0304-0111 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման 0.04հա մակերեսով հողամասը 3 450 000 (երեք միլիոն չորս հարյուր հիսուն հազար) դրամ արժեքով օտարել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 262 շենքի թիվ 6 բնակարանի բնակիչ Գևորգ Գենադիի Բաբայանին՝ բնակելի տուն կառուցելու նպատակով:
2.Աճուրդով ձեռք բերված 0.04հա մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:
3.Պարտավորեցնել Գևորգ Գենադիի Բաբայանին շինության շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

26 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*26 փետրվարի 2024թվականի N 233*

### ԳԵՂԱՄ ՄԱՆԻԿԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ և 70-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 7-ի N 209 որոշման հավելվածը և 2024 թվականի փետրվարի 20-ի հողամասն աճուրդով վաճառելու մասին N13 արձանագրությունը.

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Վերին Աղբյուրակ թաղամաս 36/1 հասցեում գտնվող 07-001-0473-0023 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման 0.06272հա մակերեսով հողամասը 1 725 000 (մեկ միլիոն յոթ հարյուր քսանհինգ հազար) դրամ արժեքով օտարել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Վերին Աղբյուրակ թաղամասի թիվ 30 տան բնակիչ Գեղամ Մանիկի Մկրտչյանին՝ բնակելի տուն կառուցելու նպատակով:

2.Աճուրդով ձեռք բերված 0.06272հա մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

3.Պարտավորեցնել Գեղամ Մանիկի Մկրտչյանին շինության շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

26 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*26 փետրվարի 2024թվականի N 234*

## ՅՈՒՐԻԿ ՎԱՐԴԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ և 70-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 9-ի N 181 որոշման հավելվածը և 2024 թվականի փետրվարի 20-ի հողամասն աճուրդով վաճառելու մասին N9 արձանագրությունը.

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի Պուրակային փողոց 2/6 հասցեում գտնվող 07-001-0517-0080 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման 0.01724հա մակերեսով հողամասը 1 150 000 (մեկ միլիոն մեկ հարյուր հիսուն հազար) դրամ արժեքով օտարել Կոտայքի մարզի Լեռնանիստ գյուղի 1 փողոց թիվ 13 տան բնակիչ Յուրիկ Վարդանի Վարդանյանին՝ առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենք կառուցելու նպատակով:
2.Աճուրդով ձեռք բերված 0.01724հա մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:
3.Պարտավորեցնել Յուրիկ Վարդանի Վարդանյանին շինության շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

26 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## *Ո Ր Ո Շ Ու Մ*

*26 փետրվարի 2024թվականի N 235*

ՍԵՐՅՈԺԱ ՎԱԶԳԵՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ
ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ և 70-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 7-ի N 209 որոշման հավելվածը և 2024 թվականի փետրվարի 20-ի հողամասն աճուրդով վաճառելու մասին N6 արձանագրությունը.

*Ո Ր Ո Շ Ու Մ  Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 3-րդ փողոց 1/20 հասցեում գտնվող 07-001-0109-0045 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության արդյունաբերական օբյեկտների 0.03հա մակերեսով հողամասը 2 300 000 (երկու միլիոն երեք հարյուր հազար) դրամ արժեքով օտարել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Րաֆֆու 3 նրբանցք թիվ 11 տան բնակիչ Սերյոժա Վազգենի Հակոբյանին:
2.Աճուրդով ձեռք բերված 0.03հա մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:
3.Պարտավորեցնել Սերյոժա Վազգենի Հակոբյանին շինության շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

26 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*26 փետրվարի 2024թվականի N 236*

ՋԵՅԹՈՒՆ ԱԶԻԶԲԵԿԻ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ և 70-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 7-ի N 209 որոշման հավելվածը և 2024 թվականի փետրվարի 20-ի հողամասն աճուրդով վաճառելու մասին N5 արձանագրությունը.

## *<u>Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝</u>*

1.Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 301/14 հասցեում գտնվող 07-001-0518-0038 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման 0.0036հա մակերեսով հողամասը 517 500 (հինգ հարյուր տասնյոթ հազար հինգ հարյուր) դրամ արժեքով օտարել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 300 շենքի թիվ 31 բնակարանի բնակիչ Ջեյթուն Ազիզբեկի Ներսիսյանին՝ տնտեսական շինություն կառուցելու նպատակով:
2.Աճուրդով ձեռք բերված 0.0036հա մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:
3.Պարտավորեցնել Ջեյթուն Ազիզբեկի Ներսիսյանին շինության շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

26 փետրվարի 2024թ
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*26 փետրվարի 2024թվականի N 237*

ՄԱՍԻՍ ՀՐԱՆՏԻ ՏԵՐ-ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ
ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ և 70-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 7-ի N 209 որոշման հավելվածը և 2024 թվականի փետրվարի 20-ի հողամասն աճուրդով վաճառելու մասին N2 արձանագրությունը.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Մուշ թաղամաս 73 հասցեում գտնվող 07-001-0501-0049 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման 0.05հա մակերեսով հողամասը 2 875 000 (երկու միլիոն ութ հարյուր յոթանասունհինգ հազար) դրամ արժեքով օտարել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 30 շենքի թիվ 11 բնակարանի բնակիչ Մասիս Հրանտի Տեր-Ավետիսյանին՝ բնակելի տուն կառուցելու նպատակով:
2.Աճուրդով ձեռք բերված 0.05հա մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:
3.Պարտավորեցնել Մասիս Հրանտի Տեր-Ավետիսյանին շինության շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

26 փետրվարի 2024թ
ք.Հրազդան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*26 փետրվարի 2024թվականի N 238*

ԷԴԳԱՐ ԷԴՎԱՐԴԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ
ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ և 70-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 7-ի N 209 որոշման հավելվածը և 2024 թվականի փետրվարի 20-ի հողամասն աճուրդով վաճառելու մասին N15 արձանագրությունը.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Ա.Խաչատրյան փողոց 27/12 հասցեում գտնվող 07-001-0636-0248 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման 0.00665հա մակերեսով հողամասը 690 000 (վեց հարյուր իննսուն հազար) դրամ արժեքով օտարել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Սպանդարյան փողոց 16 շենքի թիվ 2 բնակարանի բնակիչ Էդգար Էդվարդի Մովսիսյանին՝ առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենք կառուցելու նպատակով:
2.Աճուրդով ձեռք բերված 0.00665հա մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:
3.Պարտավորեցնել Էդգար Էդվարդի Մովսիսյանին շինության շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

26 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*26 փետրվարի 2024թվականի N 239*

ԴԱՎԻԹ ՍՈՒՐԵՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ
ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ և 70-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 7-ի N 209 որոշման հավելվածը և 2024 թվականի փետրվարի 20-ի հողամասն աճուրդով վաճառելու մասին N1 արձանագրությունը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Մուշ թաղամաս 51/1 հասցեում գտնվող 07-001-0502-0066 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման 0.0154հա մակերեսով հողամասը 1 150 000 (մեկ միլիոն մեկ հարյուր հիսուն հազար) դրամ արժեքով օտարել Կոտայքի մարզի Մեղրաձոր գյուղի 3 փողոց 4 փակուղի թիվ 1 տան բնակիչ Դավիթ Սուրենի Պետրոսյանին՝ բնակելի տուն կառուցելու նպատակով:
2.Աճուրդով ձեռք բերված 0.0154հա մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:
3.Պարտավորեցնել Դավիթ Սուրենի Պետրոսյանին շինության շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

26 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*26 փետրվարի 2024թվականի N 240*

ՌԱՖԻԿ ԳԵՆԱԴԻԻ ԲԱԲԱՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ
ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ և 70-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 9-ի N 181 որոշման հավելվածը և 2024 թվականի փետրվարի 20-ի հողամասն աճուրդով վաճառելու մասին N8 արձանագրությունը.

*<u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝</u>*

1.Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 13-րդ փողոց 19/1 հասցեում գտնվող 07-001-0512-0070 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման 0.045հա մակերեսով հողամասը 3 450 000 (երեք միլիոն չորս հարյուր հիսուն հազար) դրամ արժեքով օտարել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 262 շենքի թիվ 6 բնակարանի բնակիչ Ռաֆիկ Գենադիի Բաբայանին՝ առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենք կառուցելու նպատակով:
2.Աճուրդով ձեռք բերված 0.045հա մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:
3.Պարտավորեցնել Ռաֆիկ Գենադիի Բաբայանին շինության շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

26 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## *Ո Ր Ո Շ Ու Մ*

*26 փետրվարի 2024թվականի N 241*

ՎԱՂԱՐՇԱԿ ՀՐԱՉՅԱՅԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ և 70-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 9-ի N 181 որոշման հավելվածը և 2024 թվականի փետրվարի 20-ի հողամասն աճուրդով վաճառելու մասին N4 արձանագրությունը.

*<u>Ո Ր Ո Շ Ու Մ  Ե Մ՝</u>*

1.Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 82/32 հասցեում գտնվող 07-001-0146-0279 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման 0.0024հա մակերեսով հողամասը 575 000 (հինգ հարյուր յոթանասունհինգ հազար) դրամ արժեքով օտարել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 204 շենքի թիվ 40 բնակարանի բնակիչ Վաղարշակ Հրաչյայի Խաչատրյանին՝ ավտոտնակ կառուցելու նպատակով:
2.Աճուրդով ձեռք բերված 0.0024հա մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:
3.Պարտավորեցնել Վաղարշակ Հրաչյայի Խաչատրյանին շինության շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

26 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*27 փետրվարի 2024թվականի N 242*

ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի բաժնում նախապատրաստված նյութերի հիման վրա: Ոստիկանության Հրազդանի բաժնի ՀՈԲ ավագ տեսուչ, ոստիկանության կապիտան Դ. Ղուշչյանի կողմից կազմված արձանագրության ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասում շրջայց իրականացնելիս ոստիկանության Հրազդանի բաժնի աշխատակիցները հայտնաբերել են, որ Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 71 շենքի հարևանությամբ Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 71 շենքի 18 բնակարանի բնակիչ՝ Սասուն Լենտուշի Սարգսյանը իրականացնում է փողոցային առևտուր՝ ինչն առաջացնում է վարչական պատասխանատվություն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի հատկանիշներով, այն է՝ ոչ սահմանված տեղերում առևտուր իրականացնելը կամ ծառայություն մատուցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

Հարուցված վարչական վարույթի վերաբերյալ ծանուցված Սասուն Լենտուշի Սարգսյանը չի ներկայացել վարչական վարույթի գործի քննությանը, ուստի՝ ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 267-րդ հոդվածով գործը քննվել է վերջինիս բացակայությամբ: Կից ներկայացված լուսանկարից չի հստակեցվում, արդյոք տվյալ ապրանքները պատկանում են ենթադրյալ իրավախախտում կատարած անձին թե ոչ, ինչպես նաև ներկայացված արձանագրության ուսումնասիրության արդյունքում ևս չի հիմնավորվում վարչական իրավախախտում կատարելու փաստը, քանի որ Սասուն Սարգսյանը ըստ արձանագրության մեջ առկա նշման հրաժարվել է ստորագրելուց: Վարչական մարմինը վարչական վարույթի գործի շրջանակներում ևս ձեռք չի բերել որևէ ապացույց, որը կհիմնավորի Սասուն Սարգսյանի կողմից կատարված արարքը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝... վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայությունը.../:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասով, 251-րդ հոդվածի դրույթներով, 281-րդ և 282-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ղեկավարին կից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 20-ի N 3 արձանագրությունը.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սասուն Լենտուշի Սարգսյանի նկատմամբ կազմված արձանագրության հիման վրա հարուցված գործի վարույթը կարճել:
2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ որոշման վերաբերյալ իրազեկվելու պահից երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սասուն Լենտուշի Սարգսյանին պատշաճ կարգով իրազեկելու հաջորդ օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

27 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*27 փետրվարի 2024թվականի N 243*

ՋԱՆԻԲԵԿ ԴԱՎԹԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի բաժնում նախապատրաստված նյութերի հիման վրա: Ոստիկանության Հրազդանի բաժնի ՀՈԲ տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ Կ. Ցուգունյանի կողմից կազմված արձանագրության ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասում շրջայց իրականացնելիս ոստիկանության Հրազդանի բաժնի աշխատակիցները հայտնաբերել են, որ Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի «ՏԻՎԱ» սուպերմարկետի հարևանությամբ Սևան քաղաքի 5-րդ Միկրո թաղամասի 3 շենքի, 4 բնակարանի բնակիչ Ջանիբեկ Դավթի Սիմոնյանը իրականացնում է փողոցային առևտուր՝ ինչն առաջացնում է վարչական պատասխանատվություն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի հատկանիշներով, այն է՝ ոչ սահմանված տեղերում առևտուր իրականացնելը կամ ծառայություն մատուցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթնասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

Հարուցված վարչական վարույթի վերաբերյալ ծանուցված Ջանիբեկ Դավթի Սիմոնյանը, չի ներկայացել վարչական վարույթի գործի քննությանը, ուստի՝ ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 267-րդ հոդվածով, գործը քննվել է վերջինիս բացակայությամբ: Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի քննության արդյունքում վարչական մարմինը, քննելով գործում առկա բոլոր փաստական հանգամանքները, հաստատված է համարում, որ կատարվել է վարչական իրավախախտում, որի համար պատասխանատու է Ջանիբեկ Սիմոնյանը:

Ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 8-րդ, 32-րդ հոդվածներով, 162-րդ հոդվածով, $219^1$-րդ և 305-րդ հոդվածներով, «Վարչարարության հիմունքների և

վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ղեկավարին կից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 20-ի N 2 արձանագրությունը.

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1. Ջանիբեկ Սիմոնյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակել տուգանք 70.000 / յոթանասուն հազար / դրամ գումարի չափով:
2. Տուգանքի վճարումը կատարել սույն որոշման ստացման պահից 15-օրյա ժամկետում հետևյալ հաշվեհամարով՝ 900125001488:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ որոշման վերաբերյալ իրազեկվելու պահից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ջանիբեկ Սիմոնյանին պատշաճ կարգով իրազեկելու հաջորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

27 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*27 փետրվարի 2024թվականի N 244*

ՄԱՐՍԵԼ ՄԵԼԻՔԻ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ
ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ և 70-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 9-ի N 181 որոշման հավելվածը և 2024 թվականի փետրվարի 20-ի հողամասն աճուրդով վաճառելու մասին N3 արձանագրությունը.

*<u>Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝</u>*

1.Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամաս 551/17 հասցեում գտնվող 07-001-0185-0058 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման 0.04803հա մակերեսով հողամասը 3 450 000 (երեք միլիոն չորս հարյուր հիսուն հազար) դրամ արժեքով օտարել Կոտայքի մարզի Սոլակ գյուղի 5 փողոց թիվ 21 տան բնակիչ Մարսել Մելիքի Արզումանյանին՝ բնակելի տուն կառուցելու նպատակով:
2.Աճուրդով ձեռք բերված 0.04803հա մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:
3.Պարտավորեցնել Մարսել Մելիքի Արզումանյանին շինության շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ                                    Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

27 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*27 փետրվարի 2024թվականի N 245*

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Բորիս Գյանդժումյանի 2024 թվականի փետրվարի 13-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 124 շենքի թիվ 10 բնակարանի բնակիչ Բորիս Գյանդժումյանին սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 31012024-07-0188, գաղտնաբառ՝ 3ZBAUI562TTU/ Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս 122 շենքին հարող տարածք հասցեում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս 122/5:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

27 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


# ***Ո Ր Ո Շ ՈՒ Մ***

*27 փետրվարի 2024թվականի N 246*

## ՀՈՂԱՄԱՍԻ ՏԱՆ ՀԱՍՑԵՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ և 8-րդ բաժինների պահանջներով և հիմք ընդունելով Նարեկ Սարգսյանի 2024 թվականի փետրվարի 22-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝*

1.Երևան քաղաքի Էրեբունի Նոր Արեշ, 44 փողոց թիվ 39 տան բնակիչ Նարեկ Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 03012024-07-0073, գաղտնաբառ՝ BD1ABHHNA6BB/ Կոտայքի մարզի Սոլակ գյուղի 4-րդ թաղամաս թիվ 35 հասցեում գտնվող հողամասի հասցեն փոփոխել՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, գյուղ Սոլակ, 4-րդ փողոց 35 հասցեով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

27 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*27 փեպրվարի 2024թվականի N 247*

ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԻ ԲԱԺԱՆՎՈՂ ՄԱՍԻՆ
ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ, 7-րդ բաժինների պահանջներով և հիմք ընդունելով Արփիկ Ասատրյանի 2024 թվականի փետրվարի 16-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ջրառատ թաղամասի թիվ 45 տան բնակիչ Արփիկ Ասատրյանին սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 28122020-07-0009, գաղտնաբառ՝ EJMSDABCC6GC/ Հրազդան քաղաքի Մ. Բաղրամյան թաղամաս Զ. Անդրանիկի պողոտա 148-148/1 հասցեում գտնվող առևտրի սրահի 0.00340հա մակերեսով բաժանվող մասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Մարշալ Բաղրամյան թաղամաս 148/1, իսկ 0.01300հա մակերեսով մասինը թողնել նույնը՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Մարշալ Բաղրամյան թաղամաս 148:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

27 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*27 փետրվարի 2024թվականի N 248*

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 5-րդ բաժնով, հիմք ընդունելով Անահիտ Ջառահյանի 2024 թվականի հունվարի 1-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1.Անահիտ Հովսեփի Ջառահյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 17042023-07-0132, գաղտնաբառ՝ L54BBMZLIUJQ) հողամասում ծկնաբուծական արհեստական լճակի կառուցման համար տալ նախագծման թույլտվություն:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

27 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*27 փետրվարի 2024թվականի N 249*

### ՂԵՎՈՆԴ ՍԱՄՎԵԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Քաղսի բնակավայրի 8-րդ փողոցի 1-ին նրբանցք 7-րդ տան բնակիչ Ղևոնդ Սամվելի Գրիգորյանի դիմումի հիման վրա: Ղևոնդ Գրիգորյանի դիմումի և կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ վերջինս 2010 թվականին ենթարկվել է ավտովթարի, ստացել ծանր աստիճանի մարմնական վնասվածքներ, որի հետևանքով չի կարողանում ինքնուրույն տեղաշարժվել և գամված է հաշմանդամի սայլակին:

Վարչական վարույթի շրջանակներում անցկացվեց լսումներ, որի ընթացքում Ղևոնդը հայտնեց, որ 2022 թվականից ինքը ամուսնալուծվել է, և մինչև որդու պարտադիր զինվորական ծառայության անցնելը իր խնամքով զբաղվել է որդին՝ Հարությունը: Հարությունը այս պահին ծառայում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, և փաստացի իրեն խնամող, մշտական հոգ տանող չկա:

2023 թվականի դեկտեմբերի 15-ին Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վճռով Ղևոնդը ճանաչվել է անգործունակ: Բարեկամները, հարազատները և հարևանները այլևս չեն կարողանում ամեն անգամ գնալ, օգնել նրան: Ուստի անհրաժեշտություն է առաջացել, որ Հարությունը նշանակվի Ղևոնդի նկատմամբ խնամակալ, որպեսզի մշտապես հոգ տանի հոր մասին:

Հանձնաժողովի անդամները վերը նշված փաստերի իսկությունը ճշտելու նպատակով 2024 թվականի փետրվարի 2-ին տնայց կատարեցին Ղևոնդ Սամվելի Գրիգորյանի բնակության հասցեում՝ Կոտայքի մարզ Հրազդան համայնք Քաղսի բնակավայր 8-րդ փողոց 1-ին նրբանցք 7-րդ տուն: Տնայցի ընթացքում պարզ դարձավ, որ վերջինիս խնամքով զբաղվում է մայրը:

Հանձնաժողովի անդամները քննարկումից հետո եկան հետևյալ եզրահանգմանը. Քանի որ Ղևոնդ Գրիգորյանի որդին՝ Հարություն Գրիգորյանը, 1 տարուց ավելի է, ինչ ծառայում է ՀՀ զինված ուժերում, և հաշված ամիսներ են մնացել նրա՝ տուն

վերադառնալուն, իսկ այս պահին Ղևոնդի խնամքով զբաղվում է վերջինիս մայրը, ուստի որոշվեց չբավարարել Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Քաղսի բնակավայրի 8-րդ փողոցի 1-ին նրբանցք 7-րդ տան բնակիչ Ղևոնդ Սամվելի Գրիգորյանի դիմումը:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ և 37-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 02-ի թիվ 4 արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մերժել Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Քաղսի բնակավայրի 8-րդ փողոցի 1-ին նրբանցք 7-րդ տան բնակիչ Ղևոնդ Սամվելի Գրիգորյանի նկատմամբ՝ Հարություն Ղևոնդի Գրիգորյանին խնամակալ նշանակելու մասին դիմումը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ղևոնդ Սամվելի Գրիգորյանին պատշաճ կարգով իրազեկելու հաջորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

27 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*27 փետրվարի 2024թվականի N 250*

### ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 07-ի N 189-Ն որոշման հավելվածը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝*

1.Տրամադրել թույլտվություններ՝ համաձայն հավելվածի.
1)օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի՝ 5 (հինգ) հատ,
2)օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի՝ 5 (հինգ) հատ,
3)առևտրի օբյեկտում ժամը 24-00-ից հետո աշխատանք՝ 1 (մեկ) հատ,
4)գովազդի տեղադրում՝ 9 (ինը) հատ,
5) տեխնիկական հեղուկների վաճառք՝ 3 (երեք) հատ,
6) համայնքի անվանումը օգտագործելու՝ 1 (մեկ) հատ,
7)հանրային սննդի կազմակերպու և իրականացում՝ 2 (երկու) հատ,
8)ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացման՝ 1 (մեկ) հատ,
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

27 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2024 թ. փետրվար 27-ի
N 250 որոշման

# ՑՈՒՑԱԿ
# ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

| Հ/Հ | Իրավաբանական անձի անվանումը/անուն,ազգանուն/ կամ կազմակերպաիրավական տեսակը | Իրավաբանական հասցե | Գործունեության հասցե | Տեղական տուրքի տեսակը | Շինության տեսակը, մակերեսը՝ քառ/մ, գովազդի մակերեսը՝ քառ/մ | Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ա/Ձ «Սոնա Ասատրյան Արշակի» | Ք. Հրազդան, Ջրառատ թ-ս տուն 308 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս շենք 60/68 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 2 | Ա/Ձ «Սոնա Ասատրյան Արշակի» | Ք. Հրազդան, Ջրառատ թ-ս տուն 308 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս շենք 60/68 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 3 | Ա/Ձ «Սերյոժա Միքայելյան Սասունի» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 31/18 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 31շենք | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 4 | Ա/Ձ «Սերյոժա Միքայելյան Սասունի» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 31/18 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 31շենք | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 5 | «Մեգամ» ՍՊԸ | Ք. Հրազդան, Ջրառատ 122 | Ք. Հրազդան, Վանատուր թ-ս Հայ Ֆիդայիների 23 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 200 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 6 | «Մեգամ» ՍՊԸ | Ք. Հրազդան, Ջրառատ 122 | Ք. Հրազդան, Վանատուր թ-ս Հայ Ֆիդայիների 23 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 200 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 7 | Ա/Ձ «Անի Վյասովա Արմիկի» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս , 57/25 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս շենք 61-ին հարող տարածք | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 8 | Ա/Ձ «Անի Վլասովա Արմիկի» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս , 57/25 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս շենք 61-ին հարող տարածք | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 9 | Ա/Ձ «Սարգիս Գրիգորյան Վրեժի» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 219/24 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 242/3 | ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 10 | Ա/Ձ «Սարգիս Գրիգորյան Վրեժի» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 219/24 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 242/3 | ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք | մինչև 50 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 11 | Ա/Ձ «Մացակ Խաչատրյան Ռազմիկի» | Ք. Հրազդան, Ջրառատ 151/1 | Ք. Հրազդան, Միկրոշրջան Գ-3 թ-ս | ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացում | մինչև 500 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի տարվա համար |
| 12 | Ա/Ձ «Մացակ Խաչատրյան Ռազմիկի» | Ք. Հրազդան, Ջրառատ 151/1 | Ք. Հրազդան, Միկրոշրջան Գ-3 թ-ս | հանրային սննդի կազմակերպում և իրականացում | մինչև 500 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի տարվա համար |
| 13 | Ա/Ձ «Գոռ Գալստյան Սմբատի» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 58/37 | Ք. Հրազդան, Վանատուր թ-ս, Հայ Ֆիդայիների 13 | հանրային սննդի կազմակերպում և իրականացում | մինչև 26 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին կիսամյակի համար |
| 14 | Ա/Ձ «Եպրաքսյա Մխիթարյան Անդրանիկի» | Ք.Աբովյան | Ք. Հրազդան, Միկրոշրջան Բաղրամյան թ-ս 5-րդ փողոց, 1-ին նրբ. | գովազդի տեղադրում | 2 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի փետրվար ամսվա համար |
| 15 | «32- Դենտ» ՍՊԸ | Ջրառատ թ-ս9/11 | Ք. Հրազդան, Զ. Անդրանիկի պողոտա 35/1 | գովազդի տեղադրում | 1 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 16 | «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ | Ք. Երևան, Ազատության պողոտա 24/1 | Ք. Հրազդան Կենտրոն և Միկրոշրջան թաղամասերի սպասարկման կետեր | գովազդի տեղադրում | 7,72 քառ/մ և 5,62 քառ/մ, հիմնական շինություններ | 2024 թվականի հունվար և փետրվար ամիսների համար |
| 17 | Ա/Ձ «Գենադի Շամխալյան Ռազմիկի» | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 89/9 | Ք. Հրազդան, Զ. Անդրանիկի պողոտա 107/3 | գովազդի տեղադրում | 1 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի փետրվար ամսվա համար |
| 18 | «Պրոֆտեստ» ՍՊԸ | Ք. Երևան, Կողբացի 28/72 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, Պուրակային 38 | գովազդի տեղադրում | 4 քառ/մ, հիմնական շինություն | 2024 թվականի փետրվար ամսվա համար |
| 19 | «Յուքոմ» ՓԲԸ | Ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն 8/4 | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս, Օգոստոսի 23 թիվ 56/1 | գովազդի տեղադրում | 2,4 քառ/մ | 2024 թվականի առաջին եռամսյակի համար |
| 20 | Ա/Ձ «Ալեք Հովհաննիսյան Սայադի» | Ք. Հրազդան, Զ. Անդրանիկի պողոտա շենք8 | Ք. Հրազդան, Զ. Անդրանիկի պողոտա շենք8 թիվ 12 | գովազդի տեղադրում | 5 քառ/մ | 2024 թվականի փետրվար ամսվա համար |
| 21 | Ա/Ձ «Նորայր Ավագյան Անդրանիկի» | Ք. Հրազդան, Չարենցի փողոց տուն 9 | Ք. Հրազդան, Զ. Անդրանիկի 6 | գովազդի տեղադրում | 2 քառ/մ | 2024 թվականի փետրվար ամսվա համար |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 22 | «Մոբայլ Սենթր Արթ» ՍՊԸ | Ք. Երևան, Աջափնյակ 23/6 | Ք. Հրազդան, Զ. Անդրա[illegible]ի պողոտա 129/1-129/2 | գովազդի տեղադրում | 14 քառ/մ | 2024 թվականի տարվա համար |
| 23 | Ա/Ձ «Սևակ Սայադյան Սայադի» | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս, Տիգրան Մեծի52 | Ք. Հրազդան, Զ. Անդրանիկի պողոտա 17 | տեխնիկական հեղուկների վաճառք | հիմնական շինություն | 2024 թվականի տարվա համար |
| 24 | Ա/Ձ «Քաջիկ Սայադյան Գևորգի» | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս, 8/22 | Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս ավտոկայանին հարող տարածք | տեխնիկական հեղուկների վաճառք | հիմնական շինություն | 2024 թվականի տարվա համար |
| 25 | «Ջավախք» ԱԿ | Ք. Երևան, Նալբանդյան 37/34 | Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս, 4-րդ փողոց 3/1 | տեխնիկական հեղուկների վաճառք | հիմնական շինություն | 2024 թվականի տարվա համար |
| 26 | «Հրազդանի ՃՇՇՁ» ԲԲԸ | Ք. Հրազդան, Շահումյան 342 | Ք. Հրազդան, Շահումյան 342 | համայնքի անվանումը ֆիրմային անվանման մեջ օգտագործելու | հիմնական շինություն | 2024 թվականի տարվա համար |
| 27 | «Մեգամ» ՍՊԸ | Ք. Հրազդան, Ջրառատ 122 | Ք. Հրազդան, Վանատուր թ-ս, Հայ Ֆիդայիների 23 | առևտրի օբյեկտում ժամը 24-$^{00}$-ից հետո աշխատանք | հիմնական շինություն | 2024 թվականի տարվա համար |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

*27 փետրվարի 2024թվականի N 251*

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն, սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով հաստատված կարգերով, հիմք ընդունելով Արմեն Հարությունյանի 2023 թվականի հունիսի 8-ի դիմումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2023LQS88C ծածկագիրը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2024 թվականի հունվարի 26-ի թիվ 54 մասնագիտական եզրակացությունը.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1.Հրազդան համայնքին պատկանող Կենտրոն թաղամասում գտնվող 07-001-0454-0001 ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 35/44:

2.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի 31 շենքի 119 բնակարանի բնակիչ Արմեն Հարությունյանի կողմից ինքնակամ կառուցված Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամաս 35/44 հասցեում գտնվող 31.3քմ արտաքին մակերեսով բնակելի նպատակային նշանակության ավտոտնակը ճանաչել օրինական:

3.Ավտոտնակը և դրա սպասարկման ու պահպանման համար նախատեսված 31.3քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

27 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*27 փետրվարի 2024թվականի N 252*

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն, սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով հաստատված կարգերով, հիմք ընդունելով Ազատ Օհանյանի 2023 թվականի փետրվարի 27-ի դիմումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված ԱԶ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2023WEUVNQ ծածկագիրը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2024 թվականի հունվարի 26-ի թիվ 51 մասնագիտական եզրակացությունը.

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝*

1.Հրազդան համայնքին պատկանող Միկրոշրջան թաղամասում գտնվող 07-001-0506-0001 ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամասի 3-րդ փողոց 384:

2.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Մուշ թաղամասի 3 փողոց 7/1 տան բնակիչ Ազատ Օհանյանի կողմից ինքնակամ կառուցված Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 3-րդ փողոց 384 հասցեում գտնվող 32.07քմ արտաքին մակերեսով բնակելի նպատակային նշանակության ավտոտնակը ճանաչել օրինական:

3.Ավտոտնակը և դրա սպասարկման ու պահպանման համար նախատեսված 20.95քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

27 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*27 փետրվարի 2024թվականի N 253*

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն, սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով հաստատված կարգերով, հիմք ընդունելով Վազգեն Պետրոսյանի 2023 թվականի ապրիլի 3-ի դիմումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից չափագրված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2023Q6SNED ծածկագիրը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2024 թվականի հունվարի 26-ի թիվ 53 մասնագիտական եզրակացությունը.

*<u>ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝</u>*

1.Հրազդան համայնքին պատկանող Միկրոշրջան թաղամասում գտնվող 07-001-0506-0001 ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամասի 3-րդ փողոց 476:
2.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 111 շենքի 6 բնակարանի բնակիչ Վազգեն Պետրոսյանի կողմից ինքնակամ կառուցված Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 3-րդ փողոց 476 հասցեում գտնվող 42.6քմ արտաքին մակերեսով բնակելի նպատակային նշանակության ավտոտնակը ճանաչել օրինական:
3.Ավտոտնակը և դրա սպասարկման ու պահպանման համար նախատեսված 23.8քմ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

27 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am


## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*27 փետրվարի 2024թվականի N 254*

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Միշա Ադամյանի 2024 թվականի փետրվարի 22-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի թիվ 520 տան բնակիչ Միշա Ադամյանին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական 2154073, տրված՝ 2006 թվականի հունիսի 19-ին/ Հրազդան քաղաքի Վանատուր նոր թաղամասում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Զորավար Անդրանիկի պողոտա 81/1:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

27 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*27 փետրվարի 2024թվականի N 255*

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ, ԾԱԾԿԻ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն, սեպտեմբերի 28-ի թիվ 1831-Ն, 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն և թիվ 912-Ն որոշումներով հաստատված կարգերով, հիմք ընդունելով Գարեգին Մանուկյանի 2023 թվականի նոյեմբերի 17-ի դիմումը, Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և տրված շինության, դրա սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2023NTAWAA ծածկագիրը, Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի 2024 թվականի փետրվարի 12-ի թիվ 56 մասնագիտական եզրակացությունը.

## *<u>Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Ե Մ՝</u>*

1.Հրազդան համայնքին պատկանող Հարավային թաղամասում գտնվող 07-001-0609-0011 ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամասի Ե. Չարենցի փողոց, 74/1:

2.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Երևանյան փողոցի 29 շենքի 42 բնակարանի բնակիչ Գարեգին Մանուկյանի կողմից ինքնակամ կառուցված Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Ե. Չարենցի փողոց 74/1 հասցեում գտնվող 169.64քմ արտաքին մակերեսով արտադրական նշանակության անասնաշենքը, 39.35քմ արտաքին մակերեսով արտադրական նշանակության ծածկը, 17.94քմ արտաքին մակերեսով արտադրական նշանակության տնտեսական շինությունը ճանաչել օրինական:

3.Անասնաշենքը, ծածկը, տնտեսական շինությունը և դրանցով զբաղեցված 650.0քմ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների հողամասը գրանցել որպես Հրազդան համայնքի սեփականություն:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

27 փետրվարի 2024թ
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

*27 փետրվարի 2024թվականի N 256*

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ (ՔԱՆԴՄԱՆ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, առավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 6-րդ բաժնով, հիմք ընդունելով Գրիգոր Ղուկասյանի լիազորված անձ Գուրգեն Զախարյանի 2024 թվականի փետրվարի 22-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Ե Մ՝*

1.Համաձայնեցնել կառուցապատող Գրիգոր Ղուկասյանի նախագծային փաստաթղթերը և տալ շինարարության թույլտվություն Հրազդան քաղաքի Շահումյան փողոց 6 հասցեում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամասում (անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական N 18022022-07-0040, գաղտնաբառ՝ ASRMEKUE1MR1) պահեստի, շվաքարանների, օժանդակ շինության և պարսպի կառուցման համար՝ քանդելով N2 լիցքավորման կետը և N10 ջրամղումը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

27 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

Ձև N 2-3
ՀԱՎԵԼՎԱԾ
Հրազդան համայնքի ղեկավարի
2024թ. " փետրվարի 27-ի N 256 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ, ՀՐԱԶԴԱՆ

# ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

**N 10 27 փետրվար 2024թ**

Տրված է կառուցապատող **ԳՐԻԳՈՐ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ, ՀՀ, ԿՈՏԱՅՔ, ՀԱՆՔԱՎԱՆ, 1փողոց, 1, 3/1**
(իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման վկայականի համարը

**Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, ք.Հրազդան, Շահումյան փողոց 6** հասցեում
ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հողամասի գտնվելու վայրը)

**պահեստ (երկհարկանի շինություն), շվաքարաններ, օժանդակ շինություն և պարիսպ, միջինից բարձր ռիսկայնության աստիճան՝ III կատեգորիա, ,** օբյեկտի
(օբյեկտի անվանումը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), հակիրճ բնութագիրը, հիմնական ցուցանիշները)

**կառուցման** շինարարական աշխատանքների կատարման, այդ թվում՝
(նոր կառուցման, վերակառուցման, վերականգնման, ուղեղացման և այլն)

կառուցապատվող հողամասի գլխավոր հատակագծի վրա նշված ոչ հիմնական կառույցների ______ տեղադրման համար:
(նշվում են ոչ հիմնական կառույցների անվանումները)

1.Օբյեկտի նախագծային փաստաթղթերը՝
1)մշակվել են **«ԽՈՅԱՆՔ» ՍՊԸ**
(նախագծային փաստաթղթերի փուլը, նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը,

**ՔՊԼ 17087, ՃԲԴ-Ա-0109, ԿԵԴ-Ա2-023** կողմից,
լիցենզիայի համարը)

2)ստացել է (են) **20/02/2024** թ. N **093/24** փորձագիտական դրական եզրակացությունը (եզրակացությունները)
______
(նշել փորձաքննության տեսակը)

**«ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ 17418** կողմից
(նշել փորձաքննության մարմնի (մարմինների) անվանումը, լիցենզիայի համարը)

կամ՝ նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորագիրը՝ թ. N
(նշել նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրի համար)

3)սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների **ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ , 27/02/2024 թ.** հետ:
(նշել մարմինների անվանումները և համաձայնեցման ժամկետները)

2.Շինարարական աշխատանքներն իրականացնել **27 փետրվար 2024 - 27 փետրվար 2026** ընթացքում:
(նշել շինարարության նորմատիվային տևողությունը)

ներառյալ ավարտական ակտի տրամադրման համար ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

2.1.Ապահովել օբյեկտի շահագործման թույլտվության ստացումը՝
[ ] ավարտական ակտի տրամադրումից մեկ ամսվա ընթացքում,
[ ] ավարտական ակտի տրամադրման օրը:
3.Շինարարության վարման մատյանը բաղկացած է էջից, կարված և դրոշմակնքված է կողմից:
4.Նախագծային փաստաթղթերը փոփոխվել են
(լրացվում է N 1 հավելվածի 108-րդ կետով նախատեսված դեպքերում)

______ կողմից
(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

և սահմանված կարգով համաձայնեցվել իրավասու մարմնի ______ և այլ
(նշել իրավասու մարմնի անվանումը)

շահագրգիռ մարմինների ______ հետ:
(նշել օրենքով սահմանված համաձայնեցնող մարմինների անվանումները)

5.Հատուկ պայմաններ՝
1)Կառուցապատողը նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.
2)Շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները.
3)(լրացվում է N 1 հավելվածի 84-րդ կետով սահմանված դեպքերում) սույն թույլտվությունը տրվել է սահմանված կարգով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված փուլով ընդունված լուծումները և աշխատանքների իրականացման հաջորդականությունը
(նշվում են նախապատրաստական, հողային, շինմոնտաժային աշխատանքները և այլ աշխատանքներ)

6.(լրացվում է N1 հավելվածի 13-րդ կետով սահմանված դեպքերում)
Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց գլխավոր հատակագծի վրա համարների տակ նշված շենքի (շենքերի) և կամ շինության

(շինությունների) **N 2 լիցքավորման կետի և N 10 ջրամղումի** քանդման՝
(նշվում են ամբողջությամբ կամ մասամբ քանդման ենթակա օբյեկտները, դրանց հիմնական ցուցանիշները, ընդհանուր մակերեսը, հարկայնությունը, շինանյութերը և այլն)

սեփականատիրոջը (օգտագործողին) **18022022-07-0040**
(նշվում է պետական գրանցման վկայականի համարը)

տրված սույն թույլտվությունը նաև քանդման թույլտվություն է:
Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

7.Այլ պայմաններ ______
(նշվում են իրավական ակտերով և (կամ) պայմանագրով նախատեսված այլ պայմանները)

8.Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքները սկսելուց առնվազն 3 օր առաջ համաձայն N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկացնում է իրավասու մարմնին:
9.Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԵՎԱԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*27 փետրվարի 2024թվականի N 257*

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 3-րդ կետով և որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնով, հիմք ընդունելով 2024 թվականի փետրվարի 21-ին «Հաբշին նախագիծ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված տեխնիկական եզրակացությունը, ԱՁ Հայկ Ավագյանի կողմից չափագրված շինության հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2023UKJKKC ծածկագիրը և Ժիրայր Ավագյանի 2024 թվականի փետրվարի 22-ի դիմումը.

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝*

1.Օրինական ճանաչել Կոտայքի մարզի Քաղսի գյուղի 4 թաղամասի թիվ 88 տան բնակիչ Ժիրայր Երվանդի Ավագյանի կողմից Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ձ.Անդրանիկի պողոտա 40/1 հասցեում գտնվող սեփականության իրավունքով իրեն պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 18102021-07-0078, գաղտնաբառ՝ NFACS7XD4IJE) բնակավայրերի հասարակական, բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 98.23քմ արտաքին մակերեսով հասարակական շենքը՝ օրինականացման վճարը սահմանել 279 400 (երկու հարյուր յոթանասունինը հազար չորս հարյուր) դրամ և վճարել Հրազդան համայնքի բյուջեի 900125001504 գանձապետական հաշվին:
2.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ձ.Անդրանիկի պողոտա 40/1 հասցեում գտնվող 67.7քմ մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի բնակելի կառուցապատումից փոփոխել հասարակական կառուցապատման:
3.Կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ

անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

5.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

27 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*28 փետրվարի 2024թվականի N 258*

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի N 59 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

1.Ուժը կորցրած ճանաչել Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ղեկավարի 2022 թվականի հունիսի 30-ի N 59 շինարարության թույլտվությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

28 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*28 փետրվարի 2024թվականի N 259*

ՇԻՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՎՈՂ ՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ, 7-րդ բաժինների պահանջներով և հիմք ընդունելով Հրայա Հուսիկյանի 2024 թվականի փետրվարի 23-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

1.Երևան քաղաքի Ն. Սուրենյանց փողոցի 11Ա շենքի թիվ 211 բնակարանի բնակիչ Հրայա Հուսիկյանին սեփականության իրավունքով պատկանող /սեփականության իրավունքի գրանցման վկայական 2644151, տրված՝ 2009 թվականի մարտի 6-ին/ Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի Տիգրան Մեծի փողոց թիվ 72 հասցեում գտնվող շինության 0.01800հա մակերեսով բաժանվող մասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամասի Տիգրան Մեծի փողոց 72/1, 0.0500հա մակերեսով բաժանվող մասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամասի Տիգրան Մեծի փողոց 72/2, 0.07175հա մակերեսով բաժանվող մասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամասի Տիգրան Մեծի փողոց 72/3, 0.05020հա մակերեսով բաժանվող մասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամասի Տիգրան Մեծի փողոց 72/4, իսկ 0.10079հա մասինը թողնել նույնը՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամասի Տիգրան Մեծի փողոց 72:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

28 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*29 փետրվարի 2024թվականի N 260*

ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով ԱՁ Աշոտ Հակոբյանի կողմից տրամադրված հատակագիծը և Արզուման Իսրայելյանի 2024 թվականի փետրվարի 16-ի դիմումը.

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Շահումյան փողոց թիվ 51 տան բնակիչներ Արզումանև Էմմա Իսրայելյաններին Հրազդան քաղաքի Հարավային թաղամասում գտնվող 07-001-0047-0002 կադաստրային ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամասի Ս.Շահումյան փողոց 53/1:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

29 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ Ու Մ*

*29 փետրվարի 2024թվականի N 261*

ՀՈՒՍԻԿ ՑՈԼԱԿԻ ՄԻԼԻՏՈՍՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ
ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ և 70-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 7-ի N 209 որոշման հավելվածը և 2024 թվականի փետրվարի 20-ի հողամասն աճուրդով վաճառելու մասին N14 արձանագրությունը.

## *Ո Ր Ո Շ Ու Մ  Ե Մ՝*

1.Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Հարավային թաղամասի Ս.Շահումյան փողոց 28/1 հասցեում գտնվող 07-001-0046-0178 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման 0.09833հա մակերեսով հողամասը 8 800 000 (ութ միլիոն ութ հարյուր հազար) դրամ արժեքով օտարել Կոտայքի մարզի Ջովք գյուղի 2 փողոց 1 փակուղի թիվ 4 տան բնակիչ Հուսիկ Ցոլակի Միլիտոսյանին՝ առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենք կառուցելու նպատակով:
2.Աճուրդով ձեռք բերված 0.09833հա մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:
3.Պարտավորեցնել Հուսիկ Ցոլակի Միլիտոսյանին շինության շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

29 փետրվարի 2024թ.
ք.Հրազդան